

# ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ

## Գ Ի Ր Ք Ը

### ՂԱՐԱՔԱՂԻ ՄԱՍԻՆ

Խմբագրութիւնս բարեկամէ մը ստացաւ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի որ<sup>ա</sup>տարակած՝ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂ - ՊՍՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ» ռուսերէն գիրքը, որ նախատեսուած է Խ. Միութեան այլ հանրապետութեանց, ինչպէս նաեւ ռուսերէն լեզուին ծանօթ ընթերցող շրջանակներու համար: 94 էջ հաշուող այս գիրքը, գոր հեղինակած են խումբ մը «Ակադեմիկոսներ», կը բացուի Հայկական Ակադեմիայի նախագահութեան յառաջաբանով, ուր կը նշուին գիրքին հրատարակութեան նախադրեալներ - Լեռնային Ղարաքաղի ռամաժոդովրդական պահանջը եւ անոր հետեւած զարգացումները:

Գիրքին 5 բաժիններուն ենթավերնագիրներն են՝ 1) Լեռնային Ղարաքաղը հին ժամանակներէն մինչեւ 1917 թ.ը, 2) Լեռնային Ղարաքաղը 1918-1923 թուականներուն, 3) Լեռնային Ղարաքաղի հարցը ազգային հարցի լեռնեան ըմբռնումներու լոյսին տակ, 4) ԼՂԻՄԻ ժողովրդական եւ ընկերային-տնտեսական զարգացման մի քանի ռարցեր, եւ 5) Լեռնային Ղարաքաղի եւ անոր շուրջ ծաւալած իր<sup>ա</sup>դարձութեանց մասին:

Գիրքը պատրաստող հեղինակային խումբը բաղկացած է հետեւեալ գիտնականներէն. Ակադեմիկոսներ Գ. Գալոյեան (ղեկավար), Գ. Սարգսեան, Թղթակից Անդամներ Վ. Բարխուտարեան, Հ. Սիմոնեան, պատմութեան գծով Դոկտորներ Կ. Խուտավերտեան, Լ. Խուրշուտեան, Վ. Միֆայէլեան, Պ. Մուրատեան, իրաւագիտութեան գծով Դոկտոր Եւրի Բարսեղով:

Միւս կողմէ, կ'իմանանք թէ գիրքը սփիւռքի զանազան վայրերու մէջ ներկայիս կը թարգմանուի կարեւոր կարգ մը լեզուներով, որոնց շարքին՝ նաեւ արաբերէն լեզուով: